# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.03.2022թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2022/71**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Արջիջի» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 273.110.1156483),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.02.2022թ. թիվ 26/26-1/2745-2022 գրությամբ «Արջիջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 09.02.2022թ. գրության հիման վրա, 16.02.2022թ. թիվ 26/26-1/2745-2022 գրությամբ նախաձեռնել է «Արջիջի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Արջիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Արջիջի» ՍՊԸ-ն 07.03.2022թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ն մասնակցել է «ԹԻՎ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից հայտարարած թիվ «Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-22/04-ԴԵՂ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ներկայացրել է հայտ:

Սույն թվականի հունվարի 31-ին պատվիրատուից ստացել ենք շտկման պահանջ: Մեր կողմից կատարվել է համապատասխան շտկումը և ներկայացվել պատվիրատուին 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Ուզում ենք նշել, որ մրցույթը կազմակերպվել և անցկացվել է բազմաթիվ խախտումներով, որոնք թվարկում ենք ստորև՝

1. Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետի

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը նիստը կասեցրել է 31.01.2022թ-ի իր թիվ 2 արձանագրությունով և նույն օրը շտկման պահանջ է ուղարկել մեր կազմակերպությանը: Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման հաջորդ նիստը պետք է տեղի ունենա 02.02.2022թ-ին, սակայն գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի ունեցել 03.02.2022թ-ին, ինչը արձանագրված է թիվ 3 հավելվածով:

2. Թիվ 3 արձանագրություն մեջ գնահատող հանձնաժողովը գրել է՝

«Համաձայն 2 մայիսի 2013 թվականի N 502-Ն ՀՀ Կառավարության որոշման՝ մատակարարվող դեղորայքը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)»

2 մայիսի 2013 թվականի N 502-Ն ՀՀ Կառավարության որոշման մեջ չկա նման նախադասություն: Սույն որոշումը չի ասում, որ մատակարարը պետք է մատակարարի միայն գրանցված դեղեր: Սույն որոշումը ընդամենը սահմանում է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԳՆՎՈՂ ԴԵՂԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եթե պատվիրատուն սույն որոշման 2-րդ կետի մեջ

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին) սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

տեսնում է միայն դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստր), ապա ինչու՞ չի տեսնում «հիմնական դեղերի ցանկը» բառերը:

Այսպիսով, ՀՀ կառավարության 2 մայիսի 2013 թվականի N 502-Ն որոշման հավելվածի երկրորդ կետի համաձայն ՀՀ առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին) սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

Վերոգրյալից հետևում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով ձեռք են բերվում հետևյալ դեղերը՝

ա. ՀՀ հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերը

բ. ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը

Մեր կողմից հավելված 1.1-ով ներկայացվել են դեղեր, որոնք ընդգրկված են ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում, ինչպես նաև ընդգրկված են հիմնական դեղերի ցանկում:

Այստեղից հստակ է, որ մեր կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշման պահանջների խախտում:

3. Պահպանելով հրավերի պահանջը, մեր կողմից ժամանակին ներկայացվել է շտկում և պատվիրատուն իր թիվ 3 արձանագրության մեջ ընդունում է նաև, որ

«մասնակցի կողմից ներկայացված արտադրողներից յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընդամենը մի քանիսն են գրանցված ՀՀ դեղերի պետական գրանցամատյաում»:

Այսինքն պատվիրատուն ընդունել է, որ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ չափաբաժնի մասով մեր ներկայացված արտադրողներից առնվազն մի քանիսը գրանցված են ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում:

Ի դեպ, ներկայացված հավելված 1.1-ի մեջ յուրաքանչյուր չափաբաժնի համար սկզբից գրվել են ՀՀ-ում գրանցված դեղերը: Այս փաստը ընդունելով հանդերձ պատվիրատուն ապօրինի մերժում է մեր հայտը:

4. Բացի վերոնշյալ փաստերից մեր կողմից ներկայացված դեղերը ներկրվել են Հայաստանի Հանրապետություն համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված շրջաբերական գրության և տրված ներմուծման հավաստագրերի հիման վրա: Դեղերը մաքսազերվել են «ազատ շրջանառություն» ռեժիմով, այսինքն դեղի իրացման սահմանափակում չի սահմանվում:

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի 1-ին կետի 20-րդ ենթակետի

20) դեղերի շրջանառություն՝ դեղի ստեղծում կամ նախակլինիկական հետազոտություն կամ կլինիկական փորձարկում կամ ստանդարտացում կամ արտադրություն կամ պատրաստում կամ դեղաբուսական հումքի մշակում կամ որակի հսկողություն կամ գրանցում կամ ներմուծում կամ արտահանում կամ փոխադրում, պահպանում կամ իրացում կամ բաշխում կամ կիրառում կամ արդյունավետության, անվտանգության և կողմնակի ազդեցությունների դիտարկում կամ տեղեկատվության կամ գովազդի տարածում կամ ոչնչացում.

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի հոդված 21-ի 6-րդ կետի 4-րդ ենթակետի

6. Ներմուծման հավաստագրի տրամադրման համար դեղի գրանցված լինելը պարտադիր չէ՝

4) Լիազոր մարմնի գրավոր որոշման առկայության դեպքում՝ պետության կարիքների կամ առանձին հիվանդների համար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով դեղերի ներմուծման դեպքում.

2021թ.-ի վերջին Լիազոր մարմինը ներմուծող կազմակերպություններին ուղարկել է մի քանի նման գրավոր որոշումներ:

Իսկ մեր կողմից հայտով ներկայացված և հիմնական դեղերի ցանկում ներառված դեղերը ներմուծվել են ՀՀ համաձայն լիազոր մարմնի որոշումների և լիազոր մարմնի կողմից տրված ներմուծման հավաստագրերի հիման վրա և ենթակա են ազատ շրջանառման:

5. Պատվիրատուն «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն գրությունը ուղարկել է 09.02.2022թ-ին: Այդ պահին մեր կողմից ներկայացված հայտի մերժման վերաբերյալ արձանագրությունը N 3-ը տեղեկագրում հրապարակված չի եղել, և փաստացի մեր կազմակերպությունը տեղյակ չի եղել ներկայացված հայտի մերժման և դրա հիմքերի մասին: Խախտելով Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջները, ֆինանսների նախարարություն ուղարկած գրույթունը պետք է համարել առոչինչ:

6. Արձանագրություն N 3-ը որի ամսաթիվն է 03.02.2022թ., և որով մերժել է մեր կազմակերպության հայտը, տեղեկագրում հրապարակում է 15.02.2022թ-ին

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետի հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Փաստացի պատվիրատուն խախտել է գնումների մասին օրենքը, ինչպես նաև ժամանակին չի տեղեկացրել մեզ մեր կողմից ներկայացված հայտի մերժման վերաբերյալ:

7. Նույն կերպ, Արձանագրություն N 2-ը, որի ամսաթիվն է 31.01.2022թ. տեղեկագրում հրապարակում է միայն 15.02.2022թ-ին:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ կետի Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Փաստացի պատվիրատուն խախտել է գնումների մասին ՀՀ օրենքը:

8. Եվ, որպես լրացում, ցանկանում, ենք ներկայացնել այն տեխնիկական բնութագիրը, որը պատվիրատուն հրապարակել է իր հրավերում՝

Համաձայն 2 մայիսի 2013 թվականի N 502-Ն ՀՀ Կառավարության որոշման 3-րդ կետի՝

3. Դեղերի գնման ընթացակարգերի հրավերներում գնման առարկա հանդիսացող դեղերի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղերին ներկայացվող հետևյալ պահանջները՝

1) դեղի անվանումը նշելիս՝ գրվում են դեղի միջազգային համընդհանուր (գեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները, դեղաձևը, դեղաչափը:

Ոչ մի չափաբաժնի տեխնիկական բնութագիր կազմված չէ ՀՀ կառավարության 2 մայիսի 2013 թվականի N 502-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Ու այսքանից հետո պատվիրատուն որպես մերժման պատճառ գրել, որ շտկումները անհասկանալի են:

Կրկնում ենք, որ մեր կողմից ներկայացված շտկումը ամբողջովին համապատասխանում է հրավերի պահանջներին, «Գնումների մասի» ՀՀ օրենքի և Կառավարության որոշումների պահանջներին:

Հաշվի առնելով վերոնշյալ բազմաթիվ փաստարկները, փաստերը, մեկնաբանությունները, խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/71 ընթացակարգի շրջանակներում 25.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենն ապահովել է իր մասնակցությունը ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին նշանակված նիստը հետաձգել՝ հնարավորություն տալով Ընկերությանը ներկայացնելու գրավոր դիրքորոշում:

**3. <u>«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.02.2022թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ներկայացնում եմ Ձեզ «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-22/04-ԴԵՂ ծածկագրով դեղորայքի ձեռբերման նպատակով կազմակերպված ընթացակարգին մասնակցած «Արջիջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթացի նախաձեռնումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/71 ընթացակարգի շրջանակներում 25.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2022/71 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2022/71 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-22/04-ԴԵՂ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արջիջի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Հավելված 1.1-ում արտադրողի անվանումը սյունակում լրացված է միայն երկրների անունները, արտադրողի անվանումը նշված չէ,
- Ապրանքային նշանը սյունակում արտատպված է անվանումը սյունակի դեղերի անվանումը, սակայն՝ համաձայն հրավերի 4.3-րդ կետի 2-րդ մասի անհրաժեշտ է լրացնել

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

2) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու և Ընկերության ծանուցելու անհամապատասխանությունների մասին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.02.2022թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշում է կայացրել «Արջիջի» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.02.2022թ. թիվ 26/26-1/2745-2022 գրությունը, «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 09.02.2022թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-22/04-ԴԵՂ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արջիջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Արջիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Հավելված 1.1-ում արտադրողի անվանումը սյունակում լրացված է միայն երկրների անունները, արտադրողի անվանումը նշված չէ,
- Ապրանքային նշանը սյունակում արտատպված է անվանումը սյունակի դեղերի անվանումը, սակայն՝ համաձայն հրավերի 4.3-րդ կետի 2-րդ մասի անհրաժեշտ է լրացնել

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

2) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու և Ընկերության ծանուցելու անհամապատասխանությունների մասին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.02.2022թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշում է կայացրել «Արջիջի» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և ***յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը***, մինչդեռ՝ ուսումնասիրելով «Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-22/04-ԴԵՂ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրությունը, համաձայն որի «Արջիջի» ՍՊԸ-ի հայտում գնահատող հանձնաժողովն արձանագրել է Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ և կիրառելով Կարգի 41-րդ կետը՝ որոշում է կայացրել վերջինիս ծանուցել շտկելու անհամապատասխանությունները, ինչն էլ հիմք է հանդիսացել «Արջիջի» ՍՊԸ-ի հայտի մերժման համար, հարկ եմ համարում արձանագրել, որ այն մի քանի փաստաթղթերի արհեստական միավորման արդյունք է, մասնավորապես գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի ստորագրությունների հատվածները, որն ակնհայտ է անզեն աչքով արված զննությամբ և pdf ֆորմատով ֆայլի ուսումնասիրությամբ, որպիսի պայմաններում գտնում եմ, որ այն չի կարող համարվել հանձնաժողովի նախագահի, անդամների և քարտուղարի կողմից որպես պատշաճ ստորագրված փաստաթուղթ, քանի որ չի բավարում Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պարտադիր պահանջին, այն է՝ յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը:

Վերոգրյալ փաստական հանգամանքով պայմանավորված՝ գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.02.2022թ. թիվ 26/26-1/2745-2022 գրությամբ «Արջիջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**